

Lpuunni Newsletter

ԳԷՈՐԳ ԹԱՀԹԱԵԱՆ ԿԻՐԱԿՆՕՐԵԱՑ ԱԶԳԱՅԻՆ ՎԱՐԺԱՐԱՆ K TAHTA ARMENIAN COMMUNITY SUNDAY SCHOOL

Email: info@armenianschool.org.uk armenianschool@hotmail.co.uk

Website: www.armenianschool.org.uk

Մարտ 2024 Լրատու թիւ 29

Ողջոյնի Խօսք





2024 թուականի յունւարի 7-ին սկսուեց 2023-24 ուսումնական տարւայ երկրորդ եռամսեակի աշխատանքները, թէ՛ աշակերտներն ու ծնողները և թէ՛ ուսուցչուհիներն ու հոգաբարձուները մեծ խանդավառութեամբ և ոգևորութեամբ վերադարձան վարժարան։

Այս եռամսեակի ընթացքում փետրւարի 4ին տօնեցինք Վարդանանց հերոսամարտի 1573 ամեակը։

Մարտի 10-ին և 17-ին իններորդ դասարանների աշակերտները յանձնեցին հայոց լեզուի գրաւոր, բանաւոր և կարդալու աւարտական քննութիւնները։

Յատուկ շնորհակալութիւն Կրթական յանձնախմբի ատենապետուհի տիկին Միլվա Շամմասեանին, Վարժարանի Խնամակալութեան ատենապետ ու Կրթական յանձնախմբի անդամ Դկտ Գառնիկ Թարվերդիին և Կրթական յանձնախմբի անդամ Կարինէ Յովհաննիսեանին, որ անցկացրեցին աւարտական քննութիւնները։

Փետրւարի 3-ին Ծնողական յանձնախումբը և հոգաբարձուները կազմակերպեցին մեր աւանդական «Ընդհանուր Գիտելիքի մրցոյթը» ձեռնարկը։

Մարտի 3-ին վարժարանում նշեցինք Միջինքը, մարտի 10-ին տօնեցինք Մայրերի օրը, իսկ մարտի 17-ին Սուրբ Զատիկը։

2023-24 ուսումնական տարւայ երկրորդ եռամսեակի ընթացքում կատարւած աշխատանքների մասին դուք կը կարդաք այս համարում։

Ցանկանում եմ շնորհակալութիւն յայտնել այս ամսագրի պատախանատուներին՝ տիկ Լենա Գիւլխանձեանին, տիկ Արմինէ Սարգսեանին, տիկ Քրիստինէ Նանեանին, տիկ Թամարա Մինասեանին և տիկ Անուշ Գեղամեանին։

2024թ մարտի 17-ին աւարտւեց երկրորդ եռամսեակը։

Զատկական տօների առթիւ մարտի 24-ին, մարտի 31-ին և ապրիլի 7-ին, վարժարանի արձակուրդներ են։

2024թ ապրիլի 14-ին կը վերսկսւեն վարժարանի երրորդ եռամսեակի աշխատանքները։

Սիրելի աշակերտներ և ուսուցիչներ, յարգելի ծնողներ շնորհաւորելով Սուրբ Յարութեան տօնի առթիւ մաղթում եմ բոլորիդ և Ձեր ընտանիքներին քաջառողջութիւն, յաջողութիւններ, անձնական երջանկութիւն։

Վարժարանի տնօրինուհի Ռուզաննա Թաթուլեան







Ընդհանուր գիտելիքի մրցույթ – Quiz Night



























Այս տարի Փետրվարի 3-ին դպրոցում ևս մեկ անգամ կազմակերպվեց և իրագործվեց ընդհանուր գիտելիքների մրցույթ։ Շատ գեղեցիկ և կազմակերպված միջոցառում էր,կարելի էր ասել նաև շատ հետաքրքիր։

Դպրոցի նախկին սաները կառավարում էին մրցույթը և փորձում էին հնարավորինս զվարձալի դարձնել այն։

Մասնակիցները շատ պատրաստված էին և ջանք չէին խնայում, որպեսզի հաղթող թիմ ձանաչվեին։ Խաղը բաղկացած էր երկու մասից.Առաջին մասի ավարտից հետո մասնակիցները ձաշակեցին մեր սիրելի ծնողական հանձնախմբի պատրաստած ամենահամեղ ուտեստները և քաղցրավենիքները, որոնք ամեն տարի հրամցնում են մրցույթի մասնակիցներին։

Հիանալի, շատ հետաքրքիր ձեռնարկ էր և հաճելի մթնոլորտ էր։

This year, on February 3, our annual Quiz Night took place at the school. It was a well organised event; one could even say it was also very interesting.

Former students of the school ran the event and tried to make it as fun as possible.

The participants were equipped to compete and achieve the coveted first place position in this fun filled and exciting quiz.

The evening started and finished on a high with an enjoyable atmosphere as participants were treated to delicious dishes and desserts prepared by our amazing Parents' Committee, whose members work tirelessly to organise and execute every event.

The winning team's members received a bottle of wine each.



Էջ 3 Վարդանանց







Սուրբ Վարդանանց Sou - Vardanants

Փետրւարի 4-ին, Գևորգ Թահթաեան Կիրակնօրեալ Ազգային վարժարանը նշեց արդեն ավանդութ դարձած «Վարդանանց» հերոսամարտը։ Որի նպատակն է մեր աշակերտների մէջ դաստիարակել հայրենասիրութիւն, ազնւութիւն, հպարտութիւն իրենց հայրենիքի նկատմամբ։ «Վարդանանց» հերոսամարտը հայ ժողովրդի ազատագրական պայքարի փայլուն էջերից մէկն է։ Այս տարի լրացաւ Աւարայրի ձակատամարտի 1573 ամեակը։ 1573 տարի է անցել Վարդանանց պատերազմից, սակայն նրա ոգին ու զօրութիւնն այնքան հզոր է և տպաւորիչ, որ դարեր շարունակ մեր ժողովուրդը ոգեշնչվելով Վարդանանց հերոսների կերպարներով պայ քարել է հանուն հայրենիքի ազատութեանն և անկախութեանը։ Կեցցեն մեր աշակերտները, ուսուցչուհիները և ծնողները գեղեցիկ ծրագրի համար։

On the 4th February as per tradition, the Feast of Vardanants was commemorated at school. The purpose of which is to educate our students in patriotism, honesty, and pride towards their homeland.

The heroic battle of "Vardanants" is one of the brilliant pages of the liberation struggle of the Armenian people. This year marks the 1573rd anniversary of the Battle of Avarair. 1573 years have passed since this battle, but its spirit and strength are so powerful and impressive that for centuries our people, inspired by the images of the heroes of Vardanants, have fought for the freedom and independence of the motherland.

Long live our students, teachers and









Դպրոցէն ներս ունինք "Առաջարկներու Տուփ" մը եւ ձեզմէ կը խնդրենք որ ձեր առաջարկները, գաղափարներն ու տեսակէտները դպրոցի աշխատանքներու մասին՝ զետեղէք այդ տուփիկին մէջ:



Բանաստեղծուհի Մարիաննա Շահպարոնյանի Այցելությունը -Visit from poet Marianna Shahparonyan







Կիրակի օրը, Մարտի 3-ին, Գէորգ Թահթաեան Կիրակնօրյա Ազգային վարժարան այցելեց երիտասարդ բանաստեղծուհի՝ Մարիաննա Շահպարոնյանը։

Նա հանդիպեց 2-9րդ դասարանի աշակերտների և ուսուցչուհիների հետ։

Բանաստեղծուհին եկել էր Հայաստանից և իր հետ բերել էր «Դեպի հայաստան» բանասնոր տեղծությունների hn ժողովածուն։ Նա պատմեց, թե ինչպես են ընտանիքով տեղափոխվել Մոսկվա երբ ինքը 2 տարեկան էր։ Մարիաննան,ապրելով Ռուսաստանում, մեծացել և կրթությունը ստացել է ռուսերեն լեզվով և հայկական դպրոց գնացել է չուզենալով, որովհետև դժվարացել է հայերեն տառերը սովորել։ Սակայն տատիկի խոսքերը նրան սթափեցրել են և նա այդ օրվանից սկսել է սիրել ու սովորել իր հարազատ հայոց լեզուն էլ ավելի ջանասիրությամբ։

Նրա գիրքը թարգմանված էր տարբեր լեզուներով։ Նա ընթերցեց նույնիսկ անգլերեն տարբերակը, որը ինքն էր թարգմանել։ Մտեղծագործությունների միջոցով, նա աշխարհասփյուռ հայության ուշադրությունը ուզում է սևեռել ազգային արժեքների ուղղությամբ, ոգեշնչել սովորել հայերեն։

Չեք պատկերացնում թե ի՞նչ հետաքրքրությամբ ու ուշադրությամբ էին լսում երեխաները բանաստեղծուհուն, իսկ վերջում իրենց հարցերը ուղղեցին հետաքրքրող Տիկին Մարիաննային, որոնց նա սիրով պատասխանեց։ Տպավորված ու ոգեշնչված նրա բանաստեղծություններով, մենք խոստացանք, դպրոցի միջոցառումների ժամանակ, անպալկօգտվենք բանաստեղծուհու հայաստան» ժողովածուից։



On Sunday, March 3, the young poet Marianna Shahparonyan visited our School. She met with pupils and teachers of years 2-9.

The poet came from Armenia and brought with her the new anthology of her poems titled "To Armenia".

She spoke about her childhood and how her family moved to Moscow when she was 2 years old.

Marianna, grew up in Russia, and received her education in Russian and went to Armenian school unwillingly because she had difficulty learning the Armenian letters. However, her grandmother's words sobered her up, and from that day on, she began to learn and love her native Armenian language even more diligently.

His book was translated into different languages. She read the English version of her book which she had translated herself. Through her creations, she wants to draw the attention of Armenians around the world to our national values and to inspire them to learn Armenian.

You can't imagine how interested were the children and how attentively they listened to the poet. At the end they asked Mrs. Marianna some interesting questions, which she answered with love.

Impressed and inspired by her poetry, we promised that we will always use the poet's collection "To Armenia" during school events.



Իններորդ դասարանի ավարտական քննությունները Year 9 Final Exams







Մարտի 10-ին և 17-ին տեղի ունեցան Գէորգ Թահթաեան Կիրակնօրեայ Ազգային Վարժարանի 9-րդ դասարանի աշակերտների ավարտական քննությունները։

Մարտի 10-ին աշակերտները հանձնեցին կարդալու և գրելու քննությունները՝ երկուսն էլ գրավոր թեստերի ձևով։ Իսկ Մարտի 17-ին հանձնեցին բանավոր քննությունը։

Այս տարվա ավարտկան դասարանի աշակերտները 8-ն են։ Համոզված ենք որ մեր շրջանավարտները բարձր գնահատականներով հրաժեշտ կտան իրենց հարազատ դպրոցին ։

The final exams for the year nine leavers, were held on 10th and 17th March.

On March 10th, students took the reading and writing exams, both in the form of written tests. And on March 17th, they passed the oral exam.

There are 8 students in this year's graduating class. We are sure that our graduates will say goodbye to their home school with high marks.







Գաթայի Պատրաստութիւն – Kata Preparation Workshop















Մարտի 10-ին, որ կը համընկներ Անգլիոյ մայրերու օրուայ ինչպես նաեւ հայկական Մեծ Պաքի աւանդութեան հետ, արեւմտահայ 7րդ եւ արեւելահայ սկսնակ (ոչ հայախօս) դասարաններու աշակերտները մասնակցեցան «գաթայի» կամ «գեթէի» պատրաստութեան աշխատանոցին։ Հայկական գոգնոցներ հագած՝ գործի անցան երեխաները, սորվելով գաթայի բաղադրատոմսը, չափերը եւ պատրաստութեան եղանակը։ Իւրաքանչիւր գաթայ նախ-շուած էր աշակերտի մօր անուան սկզբնատառով։ Եփելէ ետք, համով-հոտով գաթաները փաթթեցին եւ «Շնորհաւոր Մայրերու Օր» ըսելով, նուիրեցին իրենց սիրելի մայրիկներուն։

On 10th March, coinciding with Mother's Day and the traditional Armenian period of Great Lent, the Western Armenian pupils of year 7 and Beginners' level (Eastern Armenian) took part in a 'gatah' or 'keteh' preparation workshop. Wearing their Armenian-themed aprons, the children learned about the ingredients, measurements and preparation method for this traditional Armenian Lenten flat-cake. The gatahs were decorated with the initial of each child's mother's name. Once baked, the irrestibly aromatic gatah were wrapped and gifted by the children to their mums as a Mother's Day gift.







Մայրերի Op – Mothers'Day

On March 10th, Mothers' Day was celebrated at school. The young children made beautiful cards which put a happy smile on their mothers' faces when they received them.









Զատկական տոնը վարժարանում – Easter Celebrations





Մարտի 17-ի կիրակի օրը դպրոցի սրահում մի ուրիշ աշխուժություն էր տիրում։ Հաձելի, ուրախ տրամադրություն էր թե՛ մեծերի, թե՛ հատկապես երեխաների մոտ։ Գարունը մեր դպրոցում էր...
Ծնողական հանձնախմբի անդամները ինչպես յուրաքանչյուր տարի, նույնպես և այս տարի պատրաստել էին Սուրբ Զատիկին նվիրված շատ գեղեցիկ տոնական սեղաններ համեղ կերակուրներով, քաղցրավենիքներով և գույնզգույն զարդարանքներով։ Իսկ ամենագեղեցիկը դա գունագեղ զարդարանքներով պատրաստված Զատիկի հացերն էին, պասկաները։

Հանձնախումբը երեխաների համար կազմակերպել էր նաև շոկոլադե հավկիթների փնտրտուք։ Բնականաբար երեխաների ոգևորվածությանը չափ չկար՝ իրենց ամենասիրած խաղերից մեկն էր։ Բակում բոլորը ուրախ աղաղակներով վազվզում էին այս ու այն կողմ, յուրաքանչյուրը փորձելով ավելի շատ շոկոլադե հավկիթներ գտնել։ Այս ամենը մեծ ուրախություն, ջերմություն և գարնան շունչ էր փոխանցում բոլորիս։



















Սուրբ Ջատիկ







Մեծ շնորհակալություն հատկապես ծնողական հանձնախմբի յուրաքանչյուր անդամին այդքան գեղեցիկ նախաձեռնության, իրենց նվիրված, հոգատար, կազմակերպված աշխատանքի համար, և շնորհակալություն նաև բոլոր օգնող-ներին ու մասնակիցներին։

Օրը բոլորիս համար ավելի հետաքրքիր ու բովանդակալից եղավ Բրիտանահայ համայնքի հոգևոր առաջնորդ Սրբազան Հայր Հովակիմ Բրիտանահայ Մանուկյանի, համայնքային hunnhnnh ատենապետ պարոն Արմանդ Աբրամյանի և Հայաստանից ժամանած հյուրերի՝ ՀՀ Մարդու Իրավունքների նախկին պաշտպան, պրոֆ. Արման Թաթոլանի, դերասան՝ Արամ Հովհաննիսյանի, lı hոգեբան՝ Մարիաննա Ֆրունջյանի ներկայությունը։

Հյուրերը այցելեցին դասարանները, ծանոթացան երեխաների հետ, զրույցի, հարց ու պատասխանների միջոցով փորձեցին հասկանալ երեխաների գիտելիքների, նրանց հետաքրքրությունների մասին և բոլորին մաղթեցին հաջողություններ։

Միջին և բարձր դասարանների աշակերտների համար տաղանդավոր դերասան Արամ Հովհաննիսյանը աշակերտներին բացատրեց մշակույթի դերն ու նշանակությունը։ Վերջում նա ներկայացրեց Հովհ. Թումանյանի «Կիկոսի մահը» հրաշալի մենակատարումը, որը խանդավառությամբ ընդունվեց աշակերտների կողմից։

Այդ օրը շատ ուրախ և բովանդակալից օր էր։







On the 17th of March, there was a different The day was made more meaningful for all by excitement in the school hall. Both adults and the visit of spiritual leader of the British-children were in a pleasant, happy mood.

Spring was in our school...

Armenian community, His Holiness Father Hovakim Manukyan, the chairman of the

Members of the Parents' Committee prepared very beautiful festive tables dedicated to Easter with delicious food and colourful decorations of sweets, like every year. The most beautiful were the Easter Paskas made with colourful decorations. The committee also organised a hunt for chocolate eggs for the children. Naturally, the enthusiasm of the children could not be measured, it was one of their favourite games. Everyone in the yard was running here and there with happy shouts, everyone was trying to find more chocolate eggs. It conveyed the most joy, warmth and spring spirit to all of us.

A big thank you especially to every member of the parent committee for such a beautiful initiative, for their dedication, care, and organisational expertise; thanks also to all the helpers and participants.

The day was made more meaningful for all by the visit of spiritual leader of the British-Armenian community, His Holiness Father Hovakim Manukyan, the chairman of the British-Armenian Community Council, Mr. Armand Abramyan, and guests from Armenia: former human rights defender of the RA, prof. Arman Tatoyan, actor Aram Hovhannisyan, and psychologist Marianna Frunjian. The guests visited the classrooms, got acquainted with the children, tried to understand the children's knowledge and interests through conversation, questions and answers, and wished everyone success.

It was a very joyful and exciting day.













Աշակերտների աշխատանք



no purply
for purphyp myportor & hugunymunnos:
he purpose and the property of hugurupulations. The play guine to separate the way and an important in the part of the separate in the purpose that the separate is the separate that the separate in the separate of the sep
husterthis tax your to burning by much his



Տիկ Անուշ Գեղամյանի առաջին դասարանի երեխաների աշխատանքներից։

Shunip լուր - Sad News

We were shocked and deeply sadened to hear about the untimely passing of our beloved former pupil Levon Haytayan in January 2024. Due to health issues Levon stopped attending Armenian school since September 2020.

Levonig was a lively and happy pupil with a cheeky and infectious smile. He was funny and an active member of the classroom, always willing to participate in acticities. He was loved by all his friends and teachers.

We will always remember him fondly.



2023 -2024 Տարեշրջան

2025 -2024 Տայաշրջան		
	եպտ. 2023 – 10 Դեկտ. 2023	
Term I 10 September 20	23 – 10 December 2023	
10 Սեպտեմբեր	Վերամուտ	
10 September	Back to school	
15 Հոկտեմբեր	Մշակոյթի Օր - Թարգմանչաց Տօն	
15 October	Culture Day	
22 Հոկտեմբեր	Արձակուրդ	
22 October	Half-Term Break	
12 November	Open Day	
19 Նոյեմբեր	Ծնողական Ընդհանուր Ժողով	
19 November	Parents' Meeting	
10 Դեկտեմբեր	Նոր Տարուայ Հանդէս	
10 December	New Year's Celebration	
Երկրորդ Եռամսեակ 7 Յուն	յուար 2024 – 17 Մարտ 2024	
Term II 7 January 2024 – 17 March 2024		
21 January	Open Day	
3 Փետրուար	Ընդհանուր Գիտելիքներու Մրցում	
3 February	Quiz Night	
4 Փետրուար	Վարդանանց Տօն	
4 February	St Vartan's Day	
11 Փետրուար	Արձակուրդ	
11 February	Half-Term Break	
25 February	Open Day	
10 Մարտ	Մայրերու Օր	
10 March	Mothers' Day and Open Day	
17 Մարտ	Զատկուայ Հանդէս	
17 March	Easter Celebration	
Երրորդ Եռամսեակ 14 Ապրիլ 2024 –7 Յուլիս 2024		
Term III 14 April	2024 – 7 July 2024	
28 April	Open Day	
12 Մայիս	Աշակերտական գիտելիքներու մրցում	
12 May	Quiz for students	
19 Մայիս	Մարզական Օր	
19 May	Sports' Day	
9 June	Open Day	
23 Յունիս	Դաշտահանդէս	
23 June	School BBQ	
7 Յուլիս	Ամավերջի Հանդէս	
7 July	End of Year Assembly	

Խմբագիրներ՝ Տիկ Ռուզաննա Թաթուլեան, Տիկ Քրիստինէ Նանյան, Տիկ Անուշ Գեղամյան, Տիկ Թամարա Մինասյան, Տիկ Արմինէ Սարգսյան Խորհրդատու՝ Տիկ Ռուզաննա Թաթուլեան Անգլերէն եւ Էջադրում՝ Տիկ Լենա Գիւլխանձեան